Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թ.
նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշման

Հաշվետվություն

Պատվիրակություն՝ Ղազախստանի Հանրապետություն
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

2. Զբաղեցրած պաշտոնը

1) Արսեն Սարոյան, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ) պետի տեղակալ.

2) Գևորգ Խաչատրյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի (այսուհետ՝ ՀՆՓԱԻԿ) պետի տեղակալ-մարտական պատրաստության գծով.

3) Սերգեյ Բիձյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 15-րդ փրկարարական ջոկատի (այսուհետ՝ ՓՋ) հրամանատար.

4) Դավիթ Գևորգյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 16-րդ ՓՋ խմբի պետ.

5) Արտյոմ Կարապետյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 16-րդ ՓՋ խմբի պետ.

6) Դավիթ Հայրապետյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 15-րդ ՓՋ լեռնափրկարար-դեսանտ.

7) Մկրտիչ Անտոնյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 16-րդ ՓՋ լեռնափրկարար-դեսանտ.

8) Կառլեն Հովհաննիսյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 17-րդ ՓՋ լեռնափրկարար-դեսանտ.

9) Արգամ Հարոյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 18-րդ ՓՋ լեռնափրկարար-դեսանտ.

10) Գոռ Աթոյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 17-րդ ՓՋ ընդհանուր պրոֆիլի փրկարար.

11) Արման Ազարյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 18-րդ ՓՋ ընդհանուր պրոֆիլի փրկարար.

12) Վահագն Հովակիմյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 15-րդ ՓՋ տեխնիկ-փրկարար.

13) Էդվարդ Անանյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 16-րդ ՓՋ վարորդ-փրկարար.

14) Արտյոմ Գիլոյան, ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ 18-րդ ՓՋ վարորդ-փրկարար:

3. Գործուղման վայրը և ժամկետները

Կապչագայ, Ալմաթի մարզ, Ղազախստանի Հանրապետություն, 2018թ. սեպտեմբերի 6-ից 12-ը:

4. Հրավիրող կողմը

Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն:

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության ուժերի կազմավորումների կազմում ընդգրկված ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում իրավասու մարմինների ստորաբաժանումների հետ «Սկալա-2018» հատուկ-տակտիկական ուսումնավարժությանը (այսուհետ՝ Ուսումնավարժություն):

6. Քննարկված թեմաները (Ուսումնավարժության ձևաչափը)

Ուսումնավարժության նախապատրաստումը և անցկացումը կազմակերպվեց Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից:

Ուսումնավարժությունը ղեկավարեց Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Յուրի Իլյինը:

Ուսումնավարժությունն անցկացվեց նախապատրաստական և հիմնական 3 փուլերով՝

1-ին փուլ - «Երկրաշարժի առաջացման դեպքում առաջնահերթ միջոցառումների կազմակերպումը: ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում իրավասու մարմինների ստորաբաժանումների խմբավորման ուժերի և միջոցների ճշգրտում».

2-րդ փուլ - «Կենտրոնական Ասիայի աղետալի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներում ՀԱՊԿ անդամ-պետությունների ստորաբաժանումների համատեղ գործողությունների կատարելագործումը».

3-րդ փուլ - գործնական միջոցառումներ՝

<u>1-ին դրվագ.</u> «Երկրաշարժի օջախի հետախուզում օդային տրանսպորտի օգտագործմամբ».

<u>2-րդ դրվագ.</u> «Տուժած բնակչության տարհանումը փլուզված շենքերից և շինություններից».

<u>3-րդ դրվագ.</u> «Կինոլոգիական հաշվարկների և փրկարարական խմբերի դեսանտավորումը երկրաշարժի օջախ».

4-րդ դրվագ. «Վթարափրկարարական և հրդեհաշիջման աշխատանքներ քիմիական վտանգավոր օբյեկտում».

5-րդ դրվագ. «Նավթամշակման օբյեկտի հրդեհաշիջման աշխատանքներ».

6-րդ դրվագ. «Վթարափրկարարական և անհետաձգերի աշխատանքներ, հրդեհի մարում օդային տրանսպորտի վթարային վայրէջքի ժամանակ».

7-րդ դրվագ. «Վթարափրկարարական և անհետաձգերի աշխատանքներ, հրդեհի մարում երկաթուղային տրանսպորտում».

8-րդ դրվագ. «Որոնողափրկարարական աշխատանքների իրականացում լեռնային տեղանքում».

9-րդ դրվագ. «Ջրասուզա-փրկարարական աշխատանքների իրականացում գետի վրա (գետում շրջված ուղևորներով ավտոմեքենա և երկու ջրային տրանսպորտի վթար)».

10-րդ դրվագ. «Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կազմում ընդգրկված ստորաբաժանումների համատեղ գործողություններ»:

11-րդ դրվագ. «Բարձրահարկ շենքերից տուժածների տարհանումը տարբեր հնարքներով».

12-րդ դրվագ. ՌԴ ԱԻՆ պարաշուտադեսանտային խմբի ցուցադրական ելույթ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ուսումնավարժության ընթացքին հետևեցին ՀԱՊԿ քարտուղարության և ՀԱՊԿ անդամ-պետություններից ժամանած բարձրաստիճան հյուրերը, այդ թվում նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Հրաչյա Ռոստոմյանը:

Բացման խոսքով հանդես եկավ նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Հրաչյա Ռոստոմյանը:

Ուսումնավարժության մասնակիցների հանդիսավոր շքերթին իր մասնակցությունն ունեցավ ՀՀ փրկարարական խումբը:

Անցկացվեց վթարափրկարարական տեխնիկայի և գույքի ցուցահանդես:

Ուսումնավարժության շրջանակներում զեկույցներով հանդես եկան՝

1) Օպերատիվ խմբի կազմում ընդգրկված՝ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Արսեն Սարոյանը.

2) ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ հերթափոխի պետ, փ/ծ փոխգնդապետ Արա Սահակյանը (առցանց ուղիղ կապով).

Ուսումնավարժության լավագույն մասնակիցները պարգևատրվեցին, այդ թվում ՀՀ օպերատիվ և փրկարարական խմբերի անդամներից՝

1) ՀԱՊԿ կողմից մեդալներով - 2 մասնակից.

2) Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից՝ մեդալներով - 4 մասնակից, պատվոգրերով - 4 մասնակից:

Արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով պարգևատրվեցին մեդալներով՝ 4 և պատվոգրերով 4 Ղազախստանի փրկարարական խմբի Ուսումնավարժության լավագույն մասնակիցները:

Անցկացվեց մամլո ասուլիս:

Ուսումնավարժության ավարտից հետո անցկացվեցին սեմինարներ՝

1) Կինոլոգիական ծառայությունների աշխատանքում փորձի փոխանակումը ՀԱՊԿ անդամ-պետությունների փրկարարական ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ.

2) Հոգեբանական ծառայությունների աշխատանքում փորձի փոխանակումը ՀԱՊԿ անդամ-պետությունների փրկարարական ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվեց (պայմանավորվածություն ձեռք բերվեց) ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների

վերացման ոլորտում իրավասու մարմինների՝

1) Օպերատիվ խմբի կազմում ունենալ նախապատրաստված մշտական ներկայացուցիչներ՝ ինչի արդյունքում ՀԱՊԿ շրջանակներում պլանավորման աշխատանքները և բոլոր այլ միջոցառումները կանցկացվեն առավել գրագետ և արդյունավետ.

2) ստորաբաժանումների միջև գործողությունների մակարդակը բարձրացնել և դարձնել առավել ներդաշնակ ու համակարգված:

9. Գործուղվողը (պատվիրակության ղեկավար)

ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Արսեն Սարոյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

13.09.2018թ.